



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 1

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2017 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2017-18 ուստարվա սկզբի հետ կապված հարցեր և մեր անելիքները:
2. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում մասնակիցներին շնորհավորեց նոր ուսումնական տարվա առիթով՝ մաղթելով քաջառողջությունն և աշխատանքային նոր ուժ ու եռանդ: Նա տեղեկացրեց, որ գիտխորհրդի 24 անդամներից նիստին մասնակցում է 22-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Արտաշես Սարգսյանին: Վերջինս մասնավորապես տեղեկացրեց, որ այսօր, ավանդույթի համաձայն, հանդիսավորությամբ դիմավորվել են 1-ին կուրսեցիները: Պատրաստ են դասատախտակները թե՛ բակլավրիատի և թե՛ մագիստրատուրայի ուսուցման համար:

Այնուհետև ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը: Նա տեղեկացրեց, որ գիտական խորհրդի թվակազմում կատարվել է որոշ փոփոխություն, այն է՝ 26 անդամներից մնացել են

24-ը, քանի որ 2 հոգի՝ պրոֆ. Ն. Հարությունյանը և դոց. Գ. Բաբայանը, տեղափոխվել են հայ բանասիրության ֆակուլտետից առանձնացած մանկավարժության բաժնի գիտխորհուրդ:

Դեկանն այնուհետև նշեց, որ, կապված պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերի կարգերի հանման և նոր տեսակի վճարումների հետ, լիարժեք հաստիքով աշխատող դասախոսների աշխատավարձերն ավելացել են 10.000-ական դրամով:

Ա. Ավագյանը նկատեց, որ այսօր՝ սեպտեմբերի 1-ին, հարցերի հարցը վերստին մնում է կարգապահությունը, որին պետք է հատկացնել բացառիկ ուշադրություն: Նա իր զարմանքը հայտնեց այն առիթով, որ նույնիսկ ուսումնական տարվա սկզբի առաջին օրը ֆակուլտետի անբարեխիղճ որոշ դասախոսներ չեն ներկայացել աշխատանքի, և նրանց նկատմամբ կկիրառվեն կարգապահական տույժեր: Դեկանն ամբիոնի վարիչներին խստորեն հանձնարարեց ամենօրյա հսկողություն սահմանել դասախոսական անձնակազմի աշխատանքային կարգապահության վրա, այլապես համալսարանի ղեկավարությունը կկիրառի ամենախիստ պատիժներ՝ ընդհուպ պայմանագրերի լուծարմամբ:

Պրոֆ. Ա. Ավագյանը, ամփոփելով խոսքը, ասաց, որ տարին յուրահատուկ է. պակասել է դիմորդների թվաքանակը, հաջորդ տարի այն է՛լ ավելի կնվազի՝ կապված ժամանակին 12-ամյա ավագ դպրոցի ստեղծման դժվարությունների, 1-ին դասարանցիների սակավության և արտագաղթի հետ: Դրանք, սակայն, ժամանակավոր ու հաղթահարելի են. համալսարանի ղեկավարությունը խիստ մտահոգված է այդ առիթով և ջանք ու եռանդ չի խնայում՝ հաղթահարելու առաջացած խնդիրները: ԵՊՀ-ի ռեկտորատը, բարեբախտաբար, դեռևս տարիներ առաջ կռահելով հաջորդ տարիներին սպասվող նյութական դժվարությունները, խելամտորեն գնացել է խնայողությունների ճանապարհով և կուտակել նյութական անհրաժեշտ ռեսուրսներ՝ առկա դժվարությունները ցավագին չհարձնելու ու սահուն անցում կատարելու նպատակով:

Ընթացիկ հարցերում

Ա. Լ Ս Ե Ց Ի Ն – Հայ նորագույն գրականության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Աննա Միկոյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Բան. գիտ. դոկտոր, պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և բ. գ. թ., դոց. Ս. Գրիգորյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Զարեհ Որբունու պոետիկան»:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հայ նորագույն գրականության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Աննա Միկոյանի** ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Զարեհ Որբունու պոետիկան» Ժ 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել բան. գիտ. թեկն., դոցենտ Սեյրան Գրիգորյանին:

Բ. Լ Ս Ե Ց Ի Ն.- «Զարենցյան ընթերցումներ-10» ժողովածուն հրատարակության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և բ. գ. թ., դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ ժողովածուն ամփոփում է 2017 թ. ապրիլի 27-ին Երևանի պետական համալսարանում կայացած «Զարենցյան ընթերցումներ» 10-րդ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերը: Ժողովածուի մեջ ընդգրկվել են գիտաժողովի ընթացքում ընթերցված զեկուցումների հիման վրա գրված ընդարձակ հոդվածներ: Դրանք աչքի են ընկնում առաջադրված խնդիրների բազմազանությամբ և գիտական լուծումների թարմությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Միջնորդել ԵՊՀ հրատարակչական խորհրդին՝ տպագրելու «Զարենցյան ընթերցումներ-10» ժողովածուն:

Գ. Լ Ս Ե Ց Ի Ն – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողներին անվանական կրթաթոշակ սահմանելու հարցը.

1. Պողոսյան Արշակ Անդրանիկի
2. Ճաղարյան Լուսինե Արթուրի
3. Իսրայելյան Օվսաննա Մեդրակի
4. Ծատուրյան Լիլիթ Հմայակի:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ., պրոֆ. Ա. Ա. Ավագյանը, Յու. Ս. Ավետիսյանը, Ս. Պ. Մուրադյանը և Ալ. Ա. Մակարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հիշյալ ուսանողներին կրթաթոշակ սահմանել հետևյալ անվանակարգերում.

1. Պողոսյան Արշակ Անդրանիկի - «ԵՊՀ»
2. Ճաղարյան Լուսինե Արթուրի – «Ստեփան Ալաջաջյան»
3. Իսրայելյան Օվսաննա Սեդրակի – «Գրիգոր Նարեկացի»
4. Ծատուրյան Լիլիթ Հմայակի – «Մեսրոպ Մաշտոց»:

Դ. Գիտական խորհուրդը նիստի վերջում հաստատեց նաև դեկանի և գիտքարտուղարի կողմից ներկայացված՝ 2017-2018 ուստարվա աշխատանքային ժամանակացույցը, որը բնականորեն կարող է կրել որոշ փոփոխություններ՝ պայմանավորված նոր ուսումնական տարվա գործընթացների թելադրած անհրաժեշտություններով:

I նիստ (սեպտեմբեր)

1. 2017-2018 ուստարվա սկզբի հետ կապված հարցեր և մեր անելիքները:
2. Ընթացիկ հարցեր:

II նիստ (հոկտեմբեր)

1. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում: Առաջիկա իրողությունների հեռանկարային լուծումների քննարկում:

2. 2017-18 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության ինդիքների հետ կապված հարցերի քննարկում:

3. Ուսանողների հաճախումների ընթացքը ֆակուլտետում:
4. Ընթացիկ հարցեր:

III նիստ (նոյեմբեր)

1. Պարտքերի մարման արդյունքների ամփոփում:
2. ՈԻԳԸ աշխատանքների ընթացքը ֆակուլտետում:
3. Հայ գրականության ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
4. Ընթացիկ հարցեր:

IV նիստ (դեկտեմբեր)

1. Ասպիրանտների և հայցորդների ատեստացիա:
2. Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
3. Կամրնտրական դասընթացների դասավանդման վիճակը ֆակուլտետում:
4. Քննաշրջանի նախապատրաստման ընթացքը:
5. Ընթացիկ հարցեր:

V նիստ (հունվար)

1. Օտար լեզուների դասավանդման վիճակը ֆակուլտետում:
2. Քննաշրջանի ամփոփում:
3. Հայոց լեզվի ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
4. Ուսանողների հաճախումների և դասախոսների աշխատանքային կարգապահության խնդիրների քննարկում:
5. Ասպիրանտների և հայցորդների ընդունելության հարցաշարերի քննարկում և հաստատում:
6. Ընթացիկ հարցեր:

VI նիստ (փետրվար)

1. Համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված նախապատրաստական աշխատանքների ընթացքն ամբիոններում:
2. Դասախոսների սոցիալարցման արդյունքների քննարկում:
3. Տեխնիկական միջոցների և գույքի պահպանման վիճակը ֆակուլտետում:
4. Ընթացիկ հարցեր:

VII նիստ (մարտ)

1. Համազգային կրթական և մշակութային միության տարելիցին նվիրված ԵՊՀ գիտական համատեղ նստաշրջանների աշխատանքների նախապատրաստության ընթացքը ֆակուլտետում:

2. Ուսանողների փաստաթղթերի և դեկանատի գործավարության ստուգման արդյունքների քննարկում:

3. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի հաշվետվությունը:

4. Ընթացիկ հարցեր:

VIII նիստ (ապրիլ)

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի պետական միասնական ավարտական քննությունների հարցաշարերի քննարկում և հանձնաժողովների նախագահների ու անդամների առաջադրում և հաստատում:

2. Ավարտական աշխատանքների և թեզերի կատարման ընթացքն ամբիոններում:

3. Ընթացիկ հարցեր:

IX նիստ (մայիս)

1. Գիտական աշխատանքների կատարման ընթացքը ամբիոններում:

2. Ավարտական աշխատանքների և թեզերի կատարման ընթացքն ամբիոններում:

3. 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:

4. ՈԻԳԸ նախագահի տարեկան հաշվետվություն:

5. Ընթացիկ հարցեր:

X նիստ (հունիս)

1. Կուրսղեկների տարեկան հաշվետվություն:

2. Ավարտական աշխատանքների և թեզերի պաշտպանության արդյունքների քննարկում:

3. Բակլավրիատի և մագիստրատուրայի պետական միասնական ավարտական քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվություն

4. 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում:

5. Ընթացիկ հարցեր:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ